

Պոլիկտէտ առ Կրսևտոր:

(Տես երես 286)

Սակայն ծերակուտի ժողովոց մէջ աւելի յայտնի կը տեսնուի այս զօրութեան և նուաստութեան այլակերպ երևոյթը: Կոյն այս մարդիկն որ իշխանութիւն ունին բառ կամ զան հաւաքելու, գաւիթը կը մնան՝ մինչդեռ ծերակոյտն իր որոշմանքները կ'ընէ. հոն՝ նստարաններու վրայ նստած, կը սպասեն որ վիճաբանութիւնը լինի: Բայց երբ հիւպատոսաց հաւանութեամբ ժողովք կը մտնեն, մէկէն կերպերնին կը փոխեն, ու հպարտ գատաստան կը կտրեն անոնց որոշմանց վրայ՝ որոնք քիչ մը առաջ իրեն տեսաք հետերնին կը վարուէին: Սակայն այսօրուան օրս որ իրենց իշխանութիւնը աւելի ընդարձակած և հաստատուն է, նաև ի ծերակոյտն ալ կը բազմին, և այլ և այլ ճարտասանական ճառեր կը յիշուին իրենցմէ զուրցուած. սակայն այս կարողութիւն իբր թոյլտուութիւն մը միայն կը սեպուի՝ ներելով այնպիսի զօրութեան մը ուսկէ կը վախցուի: Եթէ հաւան ըլլան այն վճռոյն որ իրենց կը ներկայացուի, իրենց հաւանութիւնը կու տան Տ տառը՝ որ կը նշանակէ Տրիբունը՝ վճռոյն տակը գնելով, և ան աւտեն վճիռը լիովին կը գործադրուի: Ասոր հակառակը՝ եթէ չհաւանին՝ արգելաճառը, զոր Տրիբուն մը իր ընկերներուն հաւանութեամբ բարձր ձայնով կը կանչէ, զան աննորոգելի կերպով կ'օջընչացնէ. և ան բանն որ երեքհարիւր պատուաւոր անձինք հասարակաց բարոյն համար որոշեր էին, չար քաղաքացւոյ մը պարզ կամբը, կամ չար ևս հաճոյիքը՝ կ'օջընանայ:

Ժողովրդեան ժողովոց մէջ՝ ինչ ալ ըլլայ խնդիրը, գատաստանարաններուն մէջ, և ինչ և իցէ տեղ՝ այս չարագուշակ բառը մի և նոյն ազդեցութիւնն ունի: Ըստ անգամ ոչ աղաչանքի, ոչ պաղատանքի խնայեր են Տրիբուն մը համոզելու համար որ իր հակառակութիւնը վերցնէ կարեւոր օրէնքի մը վրայէն: Եթէ Տրիբունին յամառութիւնը չկարենայ կերպով մը յաղթահարել, և եթէ վտանգը մօտահաս ըլլայ, ան ատեն ծերակոյտը հիւպատոսաց կը հրամայէ որ Դիկտատոր մը ընտրեն, և ան ատեն իշխանութիւնը կը հրամայէ ուր խելքը չէ կրցած համոզել:

Տրիբունից իրաւասութիւնը քաղքէն դուրս մինչև մըն մը տեղ կը զօրէ. նաև արգիլած է իրենց այս սահմանէն անգին անցնիլ, բաց ի լատինական հանգիստութիւնը երբ բոլոր ատենակալք միաբան՝ Ալպիոն լեռը կ'երթան Արամազդայ զոհընելու, ի բարեկալութիւն բոլոր այն ազգաց, յորոց կը բաղկանայ Լատին ժողովուրդը:

Տրիբունը ստիպուած են ատեններին զիշեր ցուրեկ բաց ձգելու, վասն զի ինչ և իցէ ժամանակ պարտական են օգնելու իրենց քաղաքակիցներուն: Իրենց լաւագոյն արածնութիւններէն մէկը, և թերևս ամենէն վտանգաւորն իսկ, է աղաւթը բանտարդեալ մը իր վճիռը արուելէն յառաջ. և աս ան իրաւանց բնական հետեանք մ'է՝ որով կարող են ինչ և իցէ ժողով լուծելու, և նաև որ և է որոշման հակառակելու:

Այս Տրիբունական ատենակալութիւնը, եթէ

կարելի է երբեք ասանկ կոչել զայն, իսկապէս ժողովրդական ըլլալով, միայն Ռաթիկը կրնան վարել: ատենեք ամէն մարդ առանց զանազանութեան կըր. նար անոր հետամուտ ըլլալ. այսօրուան օրս, որ ժողովուրդը ինքն իր մէջ շատ մը հուշակաւոր անձինք ունի, անոնցմէ ընդհանրապէս կ'ընտրէ իր Տրիբունները:

Պատրիկները, միշտ անյաջ ըլլալով իշխանութեան, ինչ կողմանէ ալ գալու ըլլայ, չքաղուցան անանկ տիտղոսի մը աչք տնկելու, որուն պարզ անունը կարծես թէ զերենք կը հեռացնէ: Այս պատուաւոր անձինքները, թէպէտ անպարծ կ'ըլլան իրենց ազնուական ծագմանը պատճառաւ, ի վերայայսր ամենայնի երբեմն նաև հրաժարած են անկէ կամովին. ինքզինքնին որդեգրել տալով Ռաթիկներէ, և անով Ռաթիկ գարձած ցած միջոցներով կրցեր են իրենց կարգին թշնամեաց թիւը մտնելու: Հպարտութեան անսովոր հետեւանք, որ փառասիրութեան առջին կը լուէ, որպէս զի յետոյ ալ աւելի ուժով սապարէզը ելլէ. որ և ձեռացեալ խոնարհութեան մը կերպարանքով մինչև Արամազդայ գահուն դէմ ջախջախուելու կըր. նայ յանդգնիլ անշուշտ:

Այսպիսիք են ահա այդ հուշակաւոր Տրիբունք, որ են առարկայք սիրոյ ժողովրդեան, ատենք մեծամեծաց, և հաւասարապէս խիթալի երկուց կողմանց ալ: Օտար ամենեկին այն շահասիրութիւնն որ հոռմայեցի հոռմայեցիէ կը բաժնէ, բոլորովին խաղաղ զանոնք խռովող կրից մէջ, բոլոր ուշադրութիւնս անոր ուղղած որ քննեմ անոնց անկարգ մեծութեան պատճառները, ևս ինծի հարցուի՝ թէ մէկ քանի ատենակալաց յանձնուած արտաքոյ կարգի իշխանութիւնը, ի վնաս բոլոր մեծութեան, օգտակար է արգեզք տեղութեան թէ վրանասակար: Այն ամէն բանի վրայ մտածելով որ ամէն օր աչքովս կը տեսնայի, այդ իշխանութեանը մէջ ուրիշ բան չէի կրնար տեսնալ բայց եթէ արգեզք մը հասարակաց երջանկութեան: Միւս կողմանէ թէ որ մտածէի որ ամէն ընկերութիւն իր պահպանութեանը փոյթ ունի, և անոր սպառնացող ինչ և իցէ սահմանադրութիւն ի հարկէ պետք է որ ջնջուի, ինծի անհնարին կ'երևար որ Տրիբունից իշխանութիւնը չորս և աւելի գարէ ի վեր տեսէ կրցած ըլլայ, թէ որ ժողովրդեան մը որ իր շահը շատ ալեկ կը ճանչնայ, անանկ օգուտներ ցուցըցած չըլլար՝ որ ևս չէի կրնար որոշել:

Զուր տեղ ջանացեր եմ այս խնդրոյս վրայք շատ կամ նուազ նշանաւոր քաղաքացեաց հետ խօսակցութիւններ ընելու. միշտ՝ կամ պատրիկ և կամ Ռաթիկ գտեր եմ զանոնք, որով գարձեալ առջին անորոշութեանս մէջ մնացի: Վերջապէս որ մը հարիւրապետի մը հետ գտուելով, որ շատն ցուրնէ զինուորական ծառայութեանէն քաղուած էր, խօսակցութիւնը այլ և այլ տեսակ կառավարութեանց վրայ եկաւ: Ինքը շատ մը հարցմունքներ ըրաւ ինծի Աթենքի կառավարութեանը վրայ, և ևս ալ նոյնպէս հոռմայու նկատմամբ. և վերջապէս խօսակցութեամբ երկու կողմէն ալ վատ հոռութիւնը շատնալով համարձակեցայ հարցնելու իրեն կարծիքը այս Տրիբունից վրայ, որոնց նկատմամբ ամէն օր տեսակ տեսակ խօսքեր կը լսէի:

Իր չարաճակոյթի: